ՆՈԹԵՐ
ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՄԱՍԻՆ

Բուլղարիոյ սեծովյան Վառնա քաղաքը հին ատեն կկոչվեր Օդեսոս, իսկ Վառնա անունը առաջին անգամ կլսենք 7-րդ դարուն Սքիլիցա պատմիչին կողմե գործածված:

Թուրքերը Վառնան գրավեցին 14-րդ դարու վերջին տասնամյակին, իսկ 1444-ին Լեհաստանի Վլադիսլավ Գ. Հագելո թագավորը այս քաղաքին մոտիկը գլխատվեցավ Սուլթան Մուրադ Բ-ի անձնական տապարակիր Խտրրի կողմե[1]:

Կան հին հիշատակություններ, որ դեռ Կ. Պոլսո գրավումեն (1453) առաջ կաֆացի հայ վաճառականներ այս նավահանգիստեն անցնելով Կ. Պոլիս կերթային և շատ հավանական է, որ Վառնա ցամաք կելլեին ապրանք ծախելու և կարնատև բնակություն կհաստատեին քաղաքին մեջ: Թեև այս մասին գրավոր հաստատ փաստեր կպակսին սեզի, սակայն կան գրավոր ուրիշ հիշատակարաններ, որոնք կհաստատեն, թե Պոլսո գրավումեն երկու տարի հետո (1455) Ահմեդ Գեդիկ փաշան Կաֆա քաղաքը գրավեց ու այնտեղի հայերեն մաս մը բերավ դեպի հարավ, իսկ 1484-ին սուլթան Բայազետ Բեսարաբիայի Աքքերման քաղաքի հայերը բերավ նույնպես դեպի հարավ, դեպի Կ. Պոլիս[2], իսկ ավելի վերջ Լեհաստանի Կամենեց քաղաքի հայերն ալ բերվեցան դեպի հարավ, Թուրքիա, որոնցմե մաս մը հայեր, շուրջ հարյուր հոգի, հաստատվեցան Փլովդիվ (Ֆիլիպե) 1675 թվին: Ահա այսպիսով բավականաչափ հայ գաղթականական բազմություններ 15, 16 և 17-րդ դարերուն անցած են Վառնայի վրայով:

Գրիգոր Դարանաղցի մեծ վարդապետը հայերուն Վառնա իջևանած ըլլալու մասին հաստատ տեղեկություններ կուտա իր ժամանակագրության 95 և 96-րդ էջերուն մեջ ըսելով թե 1604-ին Ղրիմի մեջ պատահած մեծ սովին հետևանքով 1605-ին ստվարաթիվ հայ գաղթականներ Կաֆայեն գալով իջևանած են Վառնա ու անկե ցրված Բալկանյան երկիրներու քաղաքները՝ Սոֆիա, Բելգրադ և այլուր: Ահա այս հայերեն մաս մըն ալ անտարակույս մնացած ըլլալու են Վառնայի մեջ, որոնք կազմած են թերևս Վառնայի առաջին նստակյաց համայնքը[3]:

[1] Կպատմվի, թե Վլադիսլավ օսմ. բանակին ձախ թևը ջախջախելե հետո 200 հեծյալներով հարձակեցավ ուղղակի սուլթան Մուրադի վրա, որ կնոջոնի հրամանատարն էր, սակայն սուլթանի տապարակիրները կացինահարեցին Վլադիսլավի ձիուն աջակի ոտքերը: Ձիե ինկավ, և Վլադիսլավ գետին տապալեցավ, ճիշտ այդ բոպեին Խտրը ցատկեց վրան և դաշույնով կոկորդը կտրեց: Կըսվի թե Խտրը հունական ծագումով վարձկան զինվոր մըն էր:

[2] «Գր. Դարանաղցի», էջ 12:

[3] Վառնայի հայերուն հին տապանաքարերեն մի քանիսը կգտնվին սբ. Սարգիս Եկեղեցվո խորանի բովանդակի սանդուղքին վրա դետնեղված (վահրավեցի, լեռցի, և այլ քաղաքացիներու անուններով), բայց անոնց ամենահնագույնը կկրե 1746 թվականը: Կրկարծվի որ առաջին համայնքի մեռելներու տապանաքարերը կորսված են:

1656-ին Վառնայեն անցնող թուրք նահապարհորդ Էվլիա Չելեբի կհաստատե, թե այդ թվականին Վառնայի մեջ հայկական թաղ գոյություն ուներ[4], որ կգտնվեր այժմու սբ. Սարգիս եկեղեցվո շուրջը:

Մարտիրոս վրդ. Ղրիմեցի 1674-ին կանգնի Վառնայեն և հոն կգտնե հայ համայնք մը փոքրիկ եկեղեցիով[5]:

Այս եկեղեցին ա՛յն է, որ հայերը գնած էին Լինգորոզ օղլու Փափա Դիմիտրիեն (հավանական է հույն քահանա) 250 ղրուշի, 1670-են կամ քիչ մը ավելի կանուխ, զոր նորոգեցին 1700 թվին: Նորոգության այս թվականը հաստատող արքունի փաստաթուղթը կգտնվի Սոֆիայի Ազգ. գրադարանը, արևելյան բաժնին մեջ, որը տրված է սուլթան Մուստաֆա Բ-ի արքունիքեն և ղրկված է Վառնայի ղատրլին՝ հայոց եկեղեցիին նորոգությունը կեցնելու համար: Այդ փաստաթուղթին մեջ կրսվի հետևյալը.

«Վառնայի թուրք հավատացյալներդ ու բնակիչները խնդրագրով մը կբողոքեն, թե քաղաքին «Աբտուրրահման էֆենդի» թաղին մեջ 20—30 տարիե ի վեր բնակող Իսա և Խալիլի (հայ) վաճառականները Լինգորոզ օղլու Փափա Դիմիտրիեն 250 ղրուշի գնած են տուն մը, զայն ճաշարանի վերածելու համար, սակայն հայտարարած են, որ ան նորոգության կարոտ հին եկեղեցի մըն է, և նորոգելու հրամանս, որ օրինավոր կարգով չէ ստացված: Ասկե զատ անոնք (հայերը) սուտ վկաներով հաջողած են ստանալ կալվածագիր մը: Սույն կալվածագրին և սուտ վկաներուն հիման վրա այժմ անոնք կուզեն շերիաթի տրամադրության հակառակ երկու մզկիթներու միջև կանգնել եկեղեցի:

Մասնավորապես նշանակված քննիչի մը և անկողմնակալ մահմեդականներու ընկերակցությամբ երթալ վերոհիշյալ եկեղեցին աչքե անցնել և ստուգվածը զեկույցով մը ներկայացնել ինձի՝ սպասելով իմ երկրորդ բարձրագույն հրամանագրիս ստացումին...»[6]:

Ի թվին 1112, սեպտեմբեր ամսու կիսուն (1700 թվի օգոստոս ամսին):

Վառնայի հայ համայնքին և առաջին եկեղեցիին մասին խոսող միակ դոկումենտն է այս արքունական փաստաթուղթը, որմե այնպես կհայտնվի, թե հայերը 1670-են առաջ եկեղեցի չեն ունեցած:

Բուլղարահայ հին գաղթօջախի գլխավոր համայնքներու կազմության ճիշտ թվականները ընդհանրապես սերտ կապ ունին իրենց եկեղեցիներու հիմնումի թվականին հետ, վասնզի հին հայ գաղթականները շատ նախանձախնդիր և հետամուտ եղած են իրենց հայրենի հավատքին և ինքնության սնաղարտ պահպանումին, այդ պատճառով իսկ ալ ուր որ գաղթած են, գյուխնին հանգչեցնելու քար մը գտնելե անմիջապես հետո մտածած են աղոթատուն և դպրոց շինելու մասին:

Վառնայի հայոց առաջին աղոթատեղին, ինչպես քիչ վերը ըսինք, եղած է Փափա Դիմիտրիեն 1665 կամ 70 թվականներուն ծախու առնված տունին մեկ սենյակը, զոր 30 տարի հետո հայերը ուզած են զայն նորոգել և եկեղեցիի վերածել: 1700 թվականին հաջողած են տեղվույն դատրլն հատոգել և կալվածագիր մըն ալ ձեռք ձգել, թե այդ շենքը հինավուրց եկեղեցի մըն է, որով սկսած են հինին վրա նոր եկեղեցի մը շինել, կիսագետնափոր և տախտակաշեն: Այս տեսնող մոլեռանդ թուրքերը սակայն, կասկածելով որ հայերը կաշառած են տեղվույն դատրլն, ուղղակի բողոքած են սուլթան Մուստաֆա Բ-ի արքունիքին, որտեղեն հանդիմանական նամակ մը դրկված է Վառնայի ղատրին մասնավոր քննիչի մը հետ, որպեսզի դադրեցնեն շինությունը, բայց տեղվույն հայերը հաջողած են քննիչն ալ համոզել և շարունակել եկեղեցվո շինությունը և ավարտել զայն:

Ըստ տեղվույն երիցագույն հայերու ավանդության, այս տախտակաշեն եկեղեցին իր գոյությունը պահած է մինչև 1790 կամ 1800-ական թվականները, որմե վերջ հաճախ տեղի ունեցող ռուս և թուրք պատերազմներու ընթացքին (1811, 1827, 1828) այրած կամ քանդված է քաղաքի ոմբակոծության ժամանակ:

1828-ին, երբ Էդիրնեի մեջ ստորագրված է ռուս և թուրք դաշինքը և խաղաղությունը հաստատված, Վառնայեն փախած հայերը սկսած են վերադառնալ, Բեսարաբիայեն ալ հայ գաղթականներ եկած են: Համայնքի հայերուն թիվը բազմապատկված է, առևտուրը զարգացած ու հրապարակ իջած են ազդեցիկ դեմքեր՝ հանձին Գրիգոր Չաքրը չորբաճիի[7], հանձ Սարգիս աղա Հայրապետյանի և ուրիշներու, որոնք սկսած են մտա-

---

[4] Пътуваж на Евлия Челебин из български земи през средата на 17 век. Периодичнипс. КН. 70, стр. 723, год 1909.

[5] Հայր Մ. Պոտուրլանի «Նավասարդ» ամսագրի 1923—24-ի համարը, էջ 20 և 29:

[6] Փանչո Դորոն այս փաստաթուղթը առաջին անգամ հրատարակած է 1940 թվականին՝ «Документи за българската история», том III, стр. 34, իսկ Արա Մարկոս 1961-ին «Երևան» թերթի 1091 համարին մեջ:

[7] Գրիգոր Չաքրը օղլուն իր ազդեցիկ դիրքին շնորհիվ թուրք իշխանավորներու կողմե նշանակված

ծել համայնքը նոր եկեղեցիով մը օժտելու անհրաժեշտության մասին:

Ահա՝ այդ տարիներուն բարեկամաբեր շարժառիթ մը եղած է սուլթան Մեհեմիդի հայտարարած իշանաթի խատտը շերիֆը, որով ազատություն կտրվեր ռայաներուն (քրիստոնյա հպատակներուն) կրոնական պաշտամունքներուն: Վառնայի հայ առաջավորներեն հանի Սարգիս Հայրապետյան, որ տեղույն կառավարիչ փաշային մտերիմն եղած է, փաշային միջոցով հաջողած է Պոլսո արքունիքեն բերել տալ եկեղեցվո շինության իրատե մը (արտոնագիր) և նշանավոր հայ ճարտարապետ մը[8] ու 1842 թվին սկսած են շինությունը այժմու սբ. Սարգիս եկեղեցիին, ճիշտ այնտեղ ուր կգտնվեր հին եկեղեցին:

Տեղվույն փաշան, որ բարեհաճ տրամադրություն մը ունեցած է դեպի հայերը, խորհուրդ տված է հանի Սարգիսին, որ իբր շինության ընդհանուր հսկիչ, նախ պարիսպով մը պատե եկեղեցվո բակը, որպեսզի անցնող-դարձով թուրքերը քարաշեն եկեղեցվո ի տես չնահատանքին ու չգրգռվին:

Հանի Սարգիս աղա Հայրապետյան շինության հանձնախումբի գլուխ կանգնելով՝ արագ թափով առաջ կտարվի նոր եկեղեցվո շինությունը, և իբր շինության պատասխանատու հսկիչ բնավ չի հեռանար աշխատավորներու քովեն ու նույնիսկ գերեկվա ճաշի չերթար տուն[10]:

Եկեղեցվո անհրաժեշտ ատաղձ ծովու ճամփով Ռումանիո Կալաց քաղաքեն Վառնա կբերե Աբրահամյան անունով հայրենասեր երիտասարդ մը, որ վերջին քահանան կըլլա նորաշեն սբ. Սարգիս եկեղեցվո[11]:

1844 հունվար 25-ին, Կ. Պոլսո Աստվածատուր արքեպս.-ի պատրիարքության օրով կավարտի եկեղեցվո շինությունը, զոր կանվանեն հանուն քաջ զորավարին մեծի վկային Փրկչին Քրիստոսի՝ սրբույն Սարգսի, որ միևնույն ժամանակ հիշված կրլա եկեղեցվո շինության արտոնագիրը բերել տվող և կառուցման գործին գլուխ կանգնող հանի Սարգսի անունը:

Հակառակ մեր երկար պրպտումներուն, Վառնայի երիցագույն տերերեն ոչ մեկը չըկրցավ մեզ ըսել, թե Վառնայի հին եկեղեցին ո՞ր սուրբին անունին նվիրված էր: Թեև Վառնայի հնագիտական թանգարանին մեջ ժամանակին կգտնվի եղեր հայոց հին եկեղեցվո սրբապատկերներեն մի քանին, որոնց որս Տրդատ թագավորի քրիստոնյա մկրտվիլը, բայց դժբախտաբար այդ պատմական պատկերներն ալ այրեր են տարիներ առաջ պատահած հրդեհի մը միջոցին, կրսե բանասեր Արա Մանկու 1961-ին գրած իր մեկ հոդվածին մեջ (տե՛ս «Երևան» շաբաթաթերթ, № 1091, Սոֆիա): Չենք գիտեր թե արդյոք այդ այրած սրբապատկերներուն հիշատակարաններուն մեջ հիշված չէ՞ր հին եկեղեցվո անունը:

Հետաքրքրական պատահար մըն է նույնպես, որ սբ. Սարգիս եկեղեցվո շինության արքունի արտոնագիրը, ավիրատուներու ցանկը և այլ փաստաթուղթեր այրած ըլլալու են կկարծվի 1895-ի Վառնայի Ազգ. մարժարանի մեծ հրդեհին ժամանակ, վասնզի թաղ. խորհրդո գրասենյակը կգտնվեր դպրոցի շենքին մեջ, ուր պահված էր եկեղեցվո արխիվը: Այդ գիշերը, այդ սենյակին մեջ այրեցավ նաև կաթողիկոսական ավիրակ Մատաթիա Տերունյան վարդապետը, որուն անունը տարիներ առաջ հանրագիտարանի մը մեջ հրատարակվեցավ:

է իբր հայ համայնքի պատասխանատու ներկայացուցիչ (միլեթվոյդիրի):

Այս Գր. Զաքրյանը Բուլղարիոյ ազատագրումեն առաջ գաղտնորեն նյութապես և բարոյապես օգնած է բուլղար հեղափոխականներուն, իսկ ազատագրումեն անմիջապես հետո (1877-են մինչև 1878-ի վերջը) ռուսերու գրավման ժամանակ, Վառնայի ժամանակավոր քաղաքային իշխանության կառավարիչ եղած է Անգելսոն հույնին և Հասան աղա թուրքին հետ: Իսկ բուլղար կառավարության կազմությենեն հետո, երբ Վառնայի բուլղար բնակչությունը բազմացած և գերեզմանենն նեղ ևկած է, Զաքրյան Գրիգոր հավանություն տված է հայոց ծովեզերյա գերեզմանոցին լայն հողաշերտ մը նվիրել բուլղարաց:

Վառնայի այժմու «Զամենխով» փողոցը մինչև 1940 թվականը Զաքրյանի անունով կկոչվեր ուրիշա «Զաքրրով»:

Սոֆիաբնակ ծանոթ մարդասեր պրոֆ.-դոկտ. Հակոբ Զաքրրով հարազատ թոռն է վերոհիշյալ Գր. Զաքրրին:

[8] Այս ճարտարապետին անունը դժբախտաբար մեզի չէ հասած:

[10] Մինչև այդ թվականը Վառնայի մեջ քարաշեն եկեղեցի շինություն չէ արտոնված քրիստոնյաներուն: Բուլղարներու առաջին և միակ քարաշեն եկեղեցին շինված է 1865-ին, սբ. Արխանգելի, որ այժմ հնագիտական թանգարանի է վերածված:

[10] Հիշյալը մեծ հայրն է Վառնայի Հաճըլյանցներու կամ Հաճիողլանցներու մոր:

[11] Աբրահամյան 1840-ական թվականներուն Պոլիս կերթա, քահանա կձեռնադրվի 34 տարեկանին, կոչվա Վառնա և մինչև 1874 տարին կքահանայագործեն և կծառայե հայրենի հավատքին ու եկեղեցիին ամենայն նվիրումով:

Այս արժանահիշատակ քահանային զավակն է Շումենի փոստ-հեռագրատան տնօրենն և հետո ազգ. Խորհրդանցի գլխավոր հեռագրող Կարապետ Փափազյանը: Իսկ տեր Հարությունն ավագ քահն. Աբրահամյանի կենսագրությունը ստացանք նրա թոռնուհին՝ ատամնաբույժ Աշխեն Փափազյանեն:

յունները ամփոփված են եկեղեցվո հրատարակային պատին քով:

Տեղական ավանդութեենեն և ընտանեկան հիշատակարան մը կիմանանք, որ սբ. Սարգիս եկեղեցվո շինության նվիրատուներեն նշանավոր եղած է Մարիամ կույս Զաքրրյանը, որը փոքր հասակեն եկեղեցվո նվիրված կույս մը ըլլալով՝ իր ամբողջ հարստությունը (գոհարեղեններ և հնչուն դրամ) ափսի մը մեջ լեցուցած և հանձնած է եկեղեցվո շինության հանձնախումբին, որուն գլխավոր անդամներեն մին էր նաև իր եղբայրը՝ ազգապետ (միլլեթմյուտիրի) Զաքրը օղլու Գրիգոր չորրաջին: Երբ Մարիամ կույս Զաքրրյան կմեռնի, ըստ ժողովրդի փափագին, կթաղեն զայն եկեղեցվո խորանին առջևը կամ դասին մեկ կողմը[12]: Կրսվի նաև, թե օրվա իշխանավորներ հանի Սարգիս Հայրապետյան և Գրիգոր Զաքրրյան ևս թաղված են եկեղեցվո դրան մոտիկը, բակին մեջ, որոնց տապանաքարերը, դժբախտաբար կորսված են մեզ անհայտ շարժառիթներով, թերևս ալ իբրև շինանյութ գործածված են դպրոցին կամ 1905-ին կեսարացի Աբրահամ գալֆայի ձեռամբ շինված եկեղեցվո նախադուռին և զանգակատան:

Գալով հին (այրած) դպրոցին, ըստ տեղական ավանդության այն շինված է 1865-ին, կամ երկու տարի առաջ, 1863-ին, ըստ «Նեոլոգոս» հունական թերթի 1871 տարվո թվին մեջ գրված հոդվածի մը, ուր կըսվի թե՝ Վառնայի հայոց դպրոցը բացված է 1871-են ութ տարի առաջ[13] եկեղեցվո բակին մեջ:

Սակայն հաստատված է, որ հայերը 1863-են առաջ արդեն դպրոց ունեցած են ոևէ տան մասնավոր սենյակի մեջ այնպես՝ ինչպես տեղվույն հույներն ու բուլղարներն ունեին[14]:

Առաջին ազգային դպրոցի մը շենքին կառուցումը տեղի ունեցած է 1863—1864 թվականներուն հետևյալ պայմաններու տակ: Վառնայի հայերը սբ. Սարգիս եկեղեցվո կառուցումը հաջողությամբ գլուխ հանելեն քաջալերված և ժողովուրդին համարեն ամբողջ ակցությունենեն հուսադրված, կորոշեն եկեղեցվո բակին մեջ կառուցանել նաև ազգային դպրոցի մասնավոր շենք մը. և իսկապես ալ եկեղեցվո կառուցումեն հազիվ 20 տարի անցած (1863—1864 թվին) կշինեն առաջին ազգային դպրոցի շենքը, որուն մեջ դասավանդելու համար Կ. Պոլսո պատրիարքարանեն կխնդրեն, որ լավ ուսուցիչներ ուղարկեն: Եվ այդպես ալ կըլլա: Շնորհիվ Պոլսեն բերված մի քանի ուսուցիչներու ջանքերուն՝ տեղվույն հայկականը (նոր սերունդը) կանոնավոր ուսում և կրթություն կստանան, լավ հայերեն կխոսին, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներ կսովորին և շատեր վարչական-պետական ու փոստ-հեռագրատան բարձր պաշտոններու հասնելով՝ պատիվ կբերեն Վառնայի հայ համայնքին[15]:

Պետք չէ մոռնալ, որ Բուլղարիոն ազատագրումեն վերջ սուլթան Համիդի հայաջինջ կոտորածներու արյունոտ տարիներուն՝ Վառնայի հայրենասեր հայ համայնքը բուլղար եղբայրական ժողովրդի մարդասիրությունենեն քաջալերված, քանի-քանի անգամներ սրտագին ձեռք կարկառած է Թուրքիայեն մազապուրծ փախչող բազմահազար հայ տառապյալներուն, եկեղեցվո, դպրոցին ու մասնավորներու տան մեջ ապաստան տված է ու ըստ կարելվույն սփոփած է զանոնք:

ՍԱՐԳԻՍ ՓԱԼՉԱՀՅԱՆ

Սոֆիա

---

[12] Վառնայի հրիցագույն դեմքեր՝ Մեյիանե Մերճանյան, Ուստիկ Փափազյան 81 տարեկան, Օգնիկ Աճեմյան՝ 80 տարեկան և դեռ ուրիշներ ալ ականջալուր եղած են այս ավանդության:

[13] Г. Димитров Принос към просветителното дело в гр. Варна ИБАД Т. VI, стр 62.

[14] Այս տան դպրոցներու գոյության մասին գրված է 1926-ին հրատարակված «Պուլկարաճայ» տարեգրքին 69-րդ էջին մեջ, իսկ բանասեր Ներսես Գասպարյան ալ գրած ունի իր «Բուլղարահայ մամուլ»-ի սկիզբն ու զարգացումը աշխատասիրության մեջ 1956—57. Սոֆիա, 1959, էջ 115.

[15] Պարտք կզգամ մասնավոր շնորհակալություն հայտնել վառնացի պրն. Հայկ Հաճոյյանին (թոռան զավակը հանի Սարգիս աղա Հայրապետյանի), որ տեղվույն տարեցները հարցափորձելու և գոյություն ունեցող ավանդությունները հավաքելու գործին մեջ մեծապես օգտակար եղավ մեզի: